ՀՐԱՀԱՆԳ
ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Մեզ համար հոգեկան գոհունակութեան առիթ հանդիսացաւ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբուած տեսնել Մայր Աթոռիս թեմական առաջնորդներին և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ հինգ արքեպիսկոպոսներին, որոնք եղբայրական մթնոլորտում, Մայիսի 8 և 9 օրերին խորհրդակցութիւններ ունեցան, Հայաստանի Հանրապետութեան նախագահի կողմից առաջադրուած՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամի ստեղծման և կեանքի կոչման ծրագրի շուրջ:

Իսկ Մայիսի 14, 15 և 16 օրերին, Մենք մեր հոգևոր եղբօր՝ Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի հետ, մասնակցեցինք Հայաստանի Հանրապետութեան նախագահի կողմից հրաւիրուած «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի անդրանիկ ժողովին, ուր որդեգրուեց յատուկ կանոնադրութիւն «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամի և առնուեցին գործնական որոշումներ, որոնց մասին յետագայում կը հաղորդուեն Ձեզ անհրաժեշտ տեղեկութիւններ:

Սոյն ժողովում որոշուեց նաև, Սփիւռքում «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամի Տեղական Յանձնաժողովներ կազմել, նախաձեռնութեամբ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչների, Հայ Առաքելական Եկեղեցու թեմական իշխանութիւնների և «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի տուեալ երկրում բնակուող անդամների, նկատի ունենալով տարբեր երկրների իւրայատուկ պայմանները:

Ուստի, այսու Մեր գրով, հրահանգում ենք Ձեզ, որ խորհրդակցաբար Ձեր ազգային-եկեղեցական մարմինների հետ, Ձեր առաւելագոյնը ի գործ դնէք, Ձեր մասնակցութիւնը բերելու Տեղական Յանձնաժողովների կազմաւորման և գործունէութեան, յիրականացում «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամի առաջադրանքների, հիմք ընդունելով վերոյիշեալ որոշումը ու նկատի ունենալով ներքոյիշեալ սկզբունքները և գործելակերպը:

1. «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամի ստեղծումը նկատել համայն հայութեան համար կամաւոր հայրենական համազգային տուրք, այլ ոչ հանգանակութիւն, նուիրատուութիւն կամ բարերարութիւն;

2. Արտասահմանում ոչ մի հայ կազմակերպութիւն, միութիւն կամ անհատ անձնաւորութիւն, ոչ էլ Հայ Առաքելական Եկեղեցին, Հիմնադրամի կազմակերպումը պէտք չէ նկատեն իրենց մենաշնորհը:

3. Տեղական Յանձնաժողովի կազմում կ'ընդգրկուեն, ըստ տեղական պայմանների, ներկայացուցիչներ՝ Հայ Առաքելական Եկեղեցու, հայ եկեղեցական յարանուանութիւնների, հայ ազգային քաղաքական, բարեգործական, մարդասիրական և այլ կարևոր կազմակերպութիւնների ու հաստատութիւնների:

4. «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամի Տեղական Յանձնաժողովների հիմնական պարտականութիւնը պէտք է նկատել՝ Յանձնաժողովին մաս կազմող բոլոր կազմակերպութիւնների լայնածաւալ աշխատանքը՝ ամէն մէկը իր շրջանակների և անդամների ու մամուլի միջոցով, պրոպագանդելու և ժողովրդի բոլոր խաւերին, բոլոր հայերին հասցնելու հրաւէրը՝ որ ամէն հայ մարդ պարտք զգայ իր կամաւոր լուման անձնապէս մուծելու, տուեալ երկրում Տեղական Յանձնաժողովի կողմից նախատեսուած դրամատան մէջ բացուած հաշուին: Դրամատունը ամիսը մէկ անգամ պարտաւոր կը լինի Յանձնաժողովին տեղեակ պահելու մուծուած գումարների մասին, յիշելով գումարը մուծողների անունները:

5. Կազմուած Տեղական Յանձնաժողովները իրենց կապը կը պահեն միայն Հայաստանի Կենտրոնական Հոգաբարձուների Խորհրդի հետ և իրենց գործունէութեան համար պատասխանատու են նրան:

6. Շատ մօտ ապագայում Հայաստանից մեր պետական իշխանութիւնների լիազօր ներկայացուցիչները կը գործուղուեն Սփիւռքի կարևոր կենտրոններ, սկսելու համար «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամի Տեղական Յանձնաժողովների կազմաւորումը, համաձայն վերոյիշեալ թիւ 3 յօդուածի տրամադրութիւնների:

Եկայք շինեսցուք սուրբ զխորանն ազատն Հայաստանի:
Սիրով և օրհնութեամբ՝

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
28 Մայիս 1992 թ.